## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

N 016/38
*30 հունվար 2019թ.*

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի 2019 թվականի թիվ 03-Ա որոշումը.

Առդիր `1էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Պլուզյան*
*/322/6-41-09*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 03-Ա

## 06-023-0250-0013 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> 01,06,2010 թվականի թիվ 186-Ն հրամանով, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշմամբ, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասով հիմք ընդունելով 15,10,2018 թ-ի թիվ 5237 ժառանգության իրավունքի վկայագիրը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Վերականգնել Բազում համայնքի 06-023-0250-0013 ծածկագրի տակ գտնվող 0,09021 հա հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը և ճանաչել Գարուշ Վանիկի Սաղաթելյանի /ծնված 19.12.1966թ./ սեփականության իրավունքը 0,09021 հա հողամասի նկատմամբ:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Ուժը կորցրած ճանաչել Բազում համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 9-ի <<06-023-0250-0013 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասի նկատմամբ հողահատկացման հիմքերը վերականգնելու և սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 01-Ա որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ